



ԿՐԹԱԿԱՆ

# ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑԻՆ ԸՆԹԱՅԻՎ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐԸ

**Վրաստանի կրթության և գիտության նախարար Ալեքսանդրե Ջեջելավան լրագրողների հետ հանդիպմանը ներկայացրեց վերջին ժամանակների նորամուծությունները: Մասնավորապես, նախարարը խոսեց տեխնոլոգիական և էլեկտրոնային սպասարկումների համակարգի վերազինման, սակավաթիվ աշակերտներով դպրոցների ֆինանսավորման, տարածաշրջանների դպրոցների ենթակառուցվածքի զարգացման և այլ հարցերի մասին:**

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին՝ Ալեքսանդրե Ջեջելավան նշեց.

- Հետո գնացող ծրագրեր ունեն: Տարբեր ժամանակներում Վրաստանի կրթական համակարգում մասնակի վերանորոգումներ են կատարվել, սակայն, հիմնականում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ ինչ-որ բան պետք է հիմնավորապես փոխվի: Դրա համար կպահանջվի հասարակայնության լայն ներգրավում:

Նախարարի խոսքով, անցած ամիսներին նա հանդիպել է շուրջ 13 հազար մանկավարժների և, ընդհանուր առմամբ, կրթական ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ստացել է ամփօշակաճանճան նրանցից:

Ալեքսանդրե Ջեջելավան նշեց, որ կրթական ոլորտը քաղաքականությունից ազատելը կարևորագույն գործոն է: Դրա համար մանկավարժների գործողությունների սխեմայից հանվել է, այսպես կոչված, «սպառնալիքը»,

ըստ որի, եթե ուսուցիչը երեք տարվա ընթացքում չի հանձնում մասնագիտական քննությունը, թողնելու է դպրոցը: Հետևաբար, առաջիկայում կկիրարկվի ոչ թե քննությունների հանձնումը, այլ մանկավարժների կողմից որակավորման հաստատումը, և արգելագիծ հասկացությունը ընդհանրապես կվերացվի:

Լրագրողների հետ հանդիպմանը Ալեքսանդրե Ջեջելավան մանրամասն խոսեց ուսումնական ծրագրի, ուսուցիչների ու աշակերտների ծանրաբեռնվածության, ծնողների և ուսուցիչների համատեղ աշխատանքի, ինկյուզիվ կրթության, փորձի յուրացման համակարգում երիտասարդ մանկավարժների ներգրավման, երեսուցյակների նկատմամբ ցուցաբերվող բռնության, կրթական համակարգի թափանցիկության և բոլոր այն թեմաների մասին, որոնք հրատապ են կրթության և գիտության ոլորտի համար:

Կրթության նախարարը խիստ

բացասաբար վերաբերմունք ցուցաբերեց, մինչև լավ վարձատրվող աշխատանք գտնելը որոշ ժամանակ դպրոցում աշխատելու, մի շարք երիտասարդ մասնագետների մտադրության մասին.

- Մենք դպրոց մուտք գործել թույլ կտանք միայն այն երիտասարդներին, ովքեր ցանկանում են դպրոցում աշխատել և դառնալ մանկավարժ: Կարելի է ստեղծել այնպիսի համակարգ, որը թույլ կտա հստակորեն հասկանալ, որ նա, ով դպրոց է եկել աշխատելու, ունի հիմնարար նպատակ: Մենք ցանկանում ենք կիրարկել մենտորական համակարգը, որպեսզի երիտասարդ մանկավարժներն ունենան մինչև հավաստագրումը փորձ կուտակելու և, մենտորի երաշխավորության դեպքում, քննություն հանձնելու, կրեդիտներ հավաքելու և ապա նոր դպրոցում աշխատելու հնարավորություն: Կայտարարեց նախարարը: Նախարարի հավաստմամբ, նոր ուսումնական տարվա ընթացքում նշանակալի նորամուծություններ են կատարվելու մասնագիտական կրթության ոլորտում, քանի որ, եթե մինչ օրս համակարգը ներառում էր 100, ապա այս տարի լրացուցիչ ավելացվում է եւս 50 նոր մասնագիտություն և, հետևաբար, կբացվեն մի քանի նոր հաստատություններ: Բարձրագույն կրթության համակարգում նշանակալի տեղ կհատկացվի օտարերկրյա ուսանողների աջակցությանը: Ինչ վերաբերում է գիտությանը, ապա այդ ոլորտում կիրականացվեն ինչպես մի շարք նշանակալի օրենսդրական փոփոխություններ, այնպես էլ՝ աշխատավարձի ավելացում: Ընդհանրապես, այդ ոլորտի ֆինանսավորումը կավելացվի:



Ջեջելավայի խոսքով, առաջիկա 2-3 շաբաթվա ընթացքում ինքը հասարակայնությանը կներկայացնի ոլորտի զարգացման ռազմավարությունը, որտեղ նշված կլինեն կարճաժամկետ, միջին տեւողության և երկարաժամկետ հեռանկարում արդյունքների ստացման շուրջ նախարարության քայլերը: Լրագրողների հետ հանդիպմանը կրթության և գիտության նախարարը պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին:

**ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
**Վրաստանի կրթության և գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ**

## ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆ - 110

Վիրահայ անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արտաշես Մխիթարյանն իր «Սովետահայ գրականությունը Վրաստանում» (1969թ.) մենագրության փաստումներում ընդգծում է. «Հաճախ մութ ու գաղտնի ծորերով է անցել Մկրտիչ Ասլանյանի կյանքի կածանը...»:

Ծնվել է 1906 թվականին, Արեւմտյան Հայաստանի Տարոնի գավառի Կոփ գյուղում: 1915-ի հայոց արհավիրքին, 9-ը տարեկանում, ընտանիքի հետ, գաղթի ճամփեքով հասել է Արեւելյան Հայաստանի Սպիտակի շրջանի Զիկրամալ գյուղ, ապա, կարճ ժամանակ անց, ընտանիքը տեղափոխվել է այն օրերի Կովկասի սիրտ համարվող, Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս: Ժամանակի քաղաքական հողմերում՝ Եղեռն, Հոկտեմբերյան հեղափոխություն, Հայրենական պատերազմ, ճաշակել է ժամանակի բոլոր զրկանքները՝ կիսաքաղց մանկություն, արդեն 10-12 տարեկանից՝ նախարայանի, վառարան վառողի, շինարար-բանվորի հոգեմաշ և նույնի վեր աշխատանքներ...


Գրականությունը,՝ ահա «բաղձալի եզերքը», որ անանուն թելերով դեպ իրեն է ձգում պատանի Մկրտչին, փրկում «ձորը գահավիժելուց»: Գրական աշխարհին մերձեցնելու ճանապարհին՝ պատանու միակ ու բարի ուղղորդող եղել է անձամբ ինքը և՛ ուսում ստանալու ու արելի տակ իր տեղը գտնելու լուսավոր տեսլականը: Այդ մասին ահա թե ինչ է նրբանկատորեն գրում Արտաշես Մխիթարյանը. «Կյանքի դժվարին քառուղիներով Ասլանյանը քայլում է շատ ավելի համարձակ ու հաստատուն, քան շատ-շատերը, որոնք գտնվում էին ծնողների հովանու ներքո, և ինքն է ընտրում իր կյանքի ուղին՝ գրականությունը»:

Քաջ գիտակցելով, որ գրականություն-եզերքը անհասանելի կմնար առանց ուսումնի՝ 1935-ին երիտասարդ Ասլանյանն ավարտում է Թբիլիսիի բանֆակը, ապա՝ ընդունվում պետականակարանի Արեւելագիտության ֆակուլտետի հայագիտության բաժնի, որը, սակայն, հետապնդող կարիքի պատճառով, թողնում է անավարտ:

1929 թվականին սկսում է աշխատել «Պրովետար» (այժմ՝ «Վրաստան») թերթում՝ որպես «Գյուղբաժնի» վարիչ: Այդ

## ԲԱԶՄԱԲԵՆՈՒՅԹ ՈՒ ՀԱԳԵՅՎԱԾ ՈՒՂԻ

Լրացավ թբիլիսցի արձակագիր Մկրտիչ Ասլանյանի ծննդյան 110-ամյակը:



**Գրողի ստեղծագործական ուղին ներառում է անցյալ դարի 30-80-ական թվականները և ուրույն հետագծով է առանձնանում Վրաստանի հայ գրական հարթակում: Նա հայ ա՛յն արվեստագետներից է, ում ստեղծագործական գործունեությունը տեսիլվեց ու արմատավորվեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում, ուր ծնավորվեց իբրև գրող և ապրեց ու ստեղծագործեց պատանեկությունից մինչ վախճանը (1986թ.): Արձակագիր, լրագրող, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1938թ.), Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ (1955-58թթ.), Վրաստանի ռադիոկոմիտեի հայկական հաղորդումների ղեկավար (1935-1941, 1956-1972թթ.): Ահա բազմաբնույթ ու հագեցված ուղին, որը ծնավորեց նրա ստեղծագործական կերպարը:**

օրերից արդեն այդ թերթի և ընդհանրապես Թբիլիսիի այն ժամանակվա հայ մանուկ էջերում, ինչպես նաև «Կարմիր ծիր», «Արշակ», «Հոկտեմբեր» հանդեսներում, պարբերաբար տպագրվում են գրականության մեջ առաջին քայլերն անող Մկրտիչ Ասլանյանի՝ «Կիրճում», «Փոքրիկ հետախույզները», «Հրացույց», «Աինոռը», «Մենավոր տունը», «Մայրը» և այլ պատմվածքներ, ակնարկներ, հատվածներ «Հրձիգներ» անավարտ վեպից, որոնք, ըստ Արտաշես Մխիթարյանի՝ «Վկայուն են գրական ծիրքով օժտված մի երիտասարդի ասպարեզ իջնելու մասին»: Գրականագետի դիտարկումներում ընդգծվում է, որ Ասլանյանի հերոսներն ընթերցողին կապում են գրքին՝ իրենց բարոյական բարձր չափանիշներով:

Բերում ստեղծագործական այս կյանքն ընդհատում է երկրորդ աշխարհամարտը... Զորակոչված Ասլանյանը անձնվեր ծառայում է Ե՛ւ որպես շարքային զինվոր, Ե՛ւ որպես Անդրկովկասյան ռազմաճակատի զինթղթակից, ինչի փաստումներն են նրա՝ «Կարմիր աստղի շքանշան» և «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշան» պարգևները: Պատերազմից հետո՝ արդեն 1946-ից, լույս են տեսնում ավերված երկրի վերակառուցման, ընտանիքի, սիրո թեմաներին նվիրված «Փոքրիկ», «Զո-

ղարկված հետքերով», «Աներեւույթ ճակատ», «Աշխեն Սաթյան» և այլ վեպեր ու վիպակներ: Գրական այս ստեղծագործությունները, որ արձագանքում էին մեր ժողովրդի կյանքի բարդ ու բեկումնային հատվածին, հույս էին ներշնչում ընթերցողին, թեւավորում՝ կյանքի և մարդկության սիրով:

Ասլանյանը հանդես է եկել նաև թատերագրության բնագավառում, նրա՝ «Հայաստանի լեռներում» պիեսը, 1955թ., հաջողությամբ բեմադրվել է Թբիլիսիի Սո.Շահումյանի անվան (այժմ՝ Պետրոս Արամյանի անվան) պետական հայկական թատրոնում:

Գրողի մահից անցել է ուղիղ երեք տասնամյակ, բայց թարմ են ժամանակակիցների հուշերը, և ահա թե ինչ են վկայում նրանք.

«Շատ էր սիրում շփվել երիտասարդության հետ և ներկա գտնվել Վրաստանի գրողների հայկական մասնաճյուղին կից «Երիտասարդ գրողներ» կազմակերպության պարապմունքներին: Մշտապես մասնակցում էր վրաց մտավորականության հետ համատեղ երեկոներին, ուր հաճախակի առանձնանում էր գրուցում էր վրաց գրականության կարկառուն դեմքեր Կոնստանդին Գամսախուրդիայի և Իոսեֆ Նոնեշվիլու հետ», - վիրահայ ավագ սերն-

դի արձակագիր Խաթակ Եփրիկյան:

«Նա ակտիվ մասնակցել է գրական քննարկումներին՝ բանավիճել, հանդել, խրախուսել և հորդորել երիտասարդներին՝ հնարավորինս շատ ընթերցել վրաց, ռուս, եվրոպական գրականության մեծերին», - բանասիրության պրոֆեսոր Էմմա Ախտյան:

«Ապրում էր Ջերթինսկու, այժմ՝ Ինգոլդվա փողոցի բակերից մեկում: Բարեւում էր մտերմիկ, անմիջապես տրամադրում էր քեզ գրույցի. ու նման հանդիպումներին նրա գրույցի թեման, մախեւառաջ, Թիֆլիսն էր, ըստ իրեն՝ թե՛ հարազատին, թե՛ օտարին մայրաքաղաքի գովակալն ու սիրելի քաղաքը», - «Վրաստան» թերթի խմբագրի տեղակալ Յուրի Պողոսյան:

«Նրա «Աշխեն Սաթյան» վեպը (1955թ.) ձեռքից ձեռք անցավ, իսկ գրքի հերոսուհի Աշխենը, ժամանակի երիտասարդության համար, դարձավ կնոջ իդեալ...», - 80-ամյա կենսաթոշակառու Հովհաննես Կոստանյան:

Մկրտիչ Ասլանյանի կերպարը թերի կմնա, եթե չավելացնենք, որ 1956թ., նրա է մի խումբ մտավորականների միջամտությամբ վերաբացվեց Վրաստանի ռադիոկոմիտեի հայկական հաղորդումների խմբագրությունը, որի խմբագիր նշանակվեց նա և աշխատեց մինչ կենսաթոշակի անցնելը:

1996-ին՝ ռադիոկոմիտեի հայկական խմբագրության 40-ամյակին նվիրված իր հոդվածում, վիրահայ անվանի արձակագիր, «Վրաստան» թերթի «Մշակույթի և գիտության» բաժնի վարիչ Բենիկ Սեյրանյանը գրում է. «Մկրտիչ Ասլանյանի նախաձեռնությամբ սկսվեց՝ «Իմ ընկերը հայերեն չգիտի» խորագրով մի օգտակար շարժում, ըստ որի՝ հայկական դպրոցների բարձր դասարանցիները ռուսական դպրոցների հայ երեխաներին սովորեցնում էին հայերեն»:

Համարձակ, իրեն բաժին ծանր ողիսականից երբեք չտրուսջացող, կենսասեր, նպատակասլաց և նպատակները ազնիվ մաքառումներով նվաճող Մկրտիչ Ասլանյան մարդու և մտավորականի կյանքը օրինակելի դպրոց է ցանկացած սերնդի համար:

ՋՈՒԼԻԵՏ ԲԱՂՆՅԱՆ

ՃՁ ԾՕ - ձ 2 ↑ 2 ռ Է 2 Ս \* 2 ՍԷ 2 1/2 Ս \* Է ձ ԾՃ ձ ԾՕ, Ս՞ Ծ

2 ԲԷ 2 ԾԾ

ՈՐՔԱՆ Ե ՆԱԽԱԳԱՀ ԱՆՆԱՏԱՎԱՐՁ



Լսել եմ, որ ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը հրաժարվել է տարեկան 400 հազար դոլար կազմող աշխատավարձից...

ԹՐԻԽԻ

Իրոք, ԱՄՆ նախագահ ընտրված Դոնալդ Թրամփը հրաժարվել է տարեկան 400 հազար դոլար աշխատավարձից...

Ավելացնենք, որ Թրամփը ԱՄՆ առաջին նախագահն է, որը հրաժարվել է աշխատավարձից: Օրինակ՝ ավելի վաղ նույն կերպ են վարվել Ջոն Բենեդիկտը և Դեյվիդ Ռեյթը...

Իսկ ինչ վերաբերում է մյուս երկրների նախագահներին, ապա ֆրանսիական Les Echos թերթի և Statista ծառայության կողմից համատեղ կազմված վարկանիշի համաձայն՝ աշխատավարձի մեծությամբ ցուցակը գլխավորում է ԱՄՆ-ի գործող նախագահ Բարաք Օբաման...

Ինչ վերաբերում է Վրաստանին և Հայաստանին, ապա մեր տվյալներով Վրաստանի նախագահի տարեկան աշխատավարձը կազմում է 34,5 հազար դոլար (86 400 լարի), իսկ Հայաստանի նախագահինը՝ 109,1 հազար դոլար (5 237 520 դրամ):

կը եզրափակում է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը՝ տարեկան 234 հազար դոլար: Այս առաջին տասնյակում հետևում են Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Ջեյկոբ Ջուբան (233 հազար դոլար), Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյը (215 հազար դոլար), ճապոնիայի վարչապետ Սինձո Աբե (203 հազար դոլար), Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանը (197 հազար դոլար), Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը (194 հազար դոլար), ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը (136 հազար դոլար), Իտալիայի վարչապետ Մատեո Ռենցին (125 հազար դոլար):

Ինչ վերաբերում է Վրաստանին և Հայաստանին, ապա մեր տվյալներով Վրաստանի նախագահի տարեկան աշխատավարձը կազմում է 34,5 հազար դոլար (86 400 լարի), իսկ Հայաստանի նախագահինը՝ 109,1 հազար դոլար (5 237 520 դրամ):

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՈՒ ՆՈՐԱԹՈՒՄ ՍԱՅՐԵՐԻՆ

Որոշ կանայք կարծում են, որ հղիության ընթացքում պետք է առատորեն ու կուշտ սնվել, հատկապես սպիտակուցային սննդով, օրինակ՝ մսով, հակառակ դեպքում, կծնվի թուլակազմ երեխա:

Հղի կնոջ կերակրացանկում, բացի կենդանական սպիտակուցների պարունակող սննդից (կաթ, կաթնաշոռ, ձու, պանիր և այլն), անհրաժեշտ է, որ ընդգրկվեն շիլաներ, բանջարեղեն, մրգեր և թարմ հյութեր: Պետք է ուշադրություն դարձնել սննդի որակին և ոչ թե քանակին:

տի շրջանում: Մի անհանգստացեք, ծննդաբերությունից հետո վեց ամսվա ընթացքում, մաշկի մգությունն ինքն իրեն կանհետանա:

Ըստ բժիշկների, տաք լոգանքների հաճախակի ընդունումը, հատկապես՝ հղիության վաղ շրջանում, կարող են հղիության վաղաժամ ընդ-

Ըստ մասնագետների, եթե մինչև վեց ամսական երեխան ստանում է հակաբորբոքային հաբեր, ապա նա յոթ տարեկանում երկու անգամ իր հասակակիցներից հաճախ է հիվանդանում այլերգիկ հիվանդություններով և ասթմայով: Նորածիններին հակաբորբոքային հաբեր, անտիբիոտիկներ նշանակելիս՝ պետք է հանդես բերել մեծագույն զգուշությամբ և միայն այն դեպքում նշանակել, երբ առանց այդ դեղերի հնարավոր չէ օգնել երեխային:

Երեխաների փորլուծի դեպքում, մեկ բաժակ լվացած բրինձը եփել յոթ բաժակ ջրում՝ մինչև պատրաստ լինելը, քամել: Կերակրել տաք շիլայով յուրաքանչյուր երկու ժամը մեկ: Կողորմի անգամ ուժեղ լուծը: Երեխայի դիաթեզի դեպքում տալ սե-



Հղիության ընթացքում անչափ օգտակար կլինի օգտագործել այնպիսի մթերքներ, որոնք պարունակում են բուսական սպիտակուցներ, լոբազգիներ, ընդեղեն, ցորեն և ցորենի թեփ: Կարելի է ուտել խաշած միս, ձուկ:

Հղիության ընթացքում պետք չէ օգտագործել երշիկեղեն, յուղալի թխվածքներ, շուտ փչացող ճաշատեսակներ: Հղի կնոջ սնունդը պետք է լինի թարմ պատրաստված: Սահմանափակեք կծու մթերքների կամ համեմունքների օգտագործումը:

Հղիության ընթացքում չօգտագործեք ոգելից խմիչք (այդ թվում՝ նաեւ գարեջուր): Ալկոհոլը անչափ վնաս է պտղի նյարդային համակարգին: Սուրճի մեջ պարունակվող կոֆեինը կարող է նպաստել արյան ճնշման բարձրացմանը: Այդ իսկ պատճառով կարելի է խմել օրը մեկ բաժակ ոչ թանձր սուրճ:

Հղիության ընթացքում կարող են մուգ բծեր հայտնվել ձեր դեմքին, որովայնի միջին մասում, պոր-

հատման պատճառ հանդիսանալ: Հղիության եւ կրծքով կերակրելու շրջանում ոչ մի դեպքում մի օգտագործեք սնդիկ պարունակող սպիտակեցնող քսուրներ, դրանք վտանգավոր են ոչ միայն մոր, այլև երեխայի առողջության համար:

Հղիության ընթացքում դեղատոնիկ վիտամինային հաբեր գնեք միայն բժշկի հետ խորհրդակցելուց հետո: Գիշտ սնվելու դեպքում, հաճախ դրա անհրաժեշտությունը չի լինում:

բողկի հյուսք՝ սկսած մեկ կաթիլից: Չափաբաժինը ամեն օր ավելացնել երկու կաթիլ և հասցնել մինչև ճաշի գոլալի չափ: Հյուսքը տալ օրը երեք անգամ՝ ուտելուց քսան րոպե առաջ:

Լվանալ ձուն, եփել հինգ րոպե, սառեցնել: Կեղեղից անջատել թաղանթը, իսկ կեղեղը փայտե հավանգով փոշի դարձնել: Դիաթեզի դեպքում, երեխային տալ մեկ թեյի գոլալ ձվի կեղեղի փոշի՝ 5-6 կաթիլ կիտրոնահյութով: Բուժման կուրսը 30 օր:

ՀԵՏԱՔՐԹԻՐ Է

ԽՄԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ԿԱՆԱՅՔ ՀԱՍՆՈՒՄ ԵՆ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ

Կանայք ոգելից խմիչքների օգտագործմամբ զրեթե հասել են տղամարդկանց: Այդ մասին վկայում են երկու սեռերի ալկոհոլային հակումների շուրջ ավստրալացի գիտնականների կողմից անցկացված հետազոտության արդյունքները:



հետ միասին փոխվում են նաև սովորությունները:

Հետազոտության համաձայն, 20-րդ դարակազմի տղամարդիկ կանանցից երկու անգամ (ավելի ճիշտ 2,2 անգամ) ավելի հաճախ

1891-ից մինչև 2001 թվականն ընկած ժամանակաշրջանում ծնված չորս միլիոն մարդու տվյալների բազայի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջ տղամարդիկ շատ ավելի էին հակված տրվելու խմելու գաղթակցությանը, հետևաբար նաև բախվելու առողջության հետ կապված այն խնդիրներին, որոնք ուղեկցում են այդ հակմանը: Բայց կանանց ներկա սերունդը գործնականում վերաբերել է այդ հետ մնալը, ասված է BMJ Open բժշկական հանդեսի հրատարակման մեջ:

Ժամանակակից հասարակության մեջ փոխվում են տղամարդկանց ու կանանց սոցիալական դերերը և դրանց

էին ալկոհոլ օգտագործում, կանանցից երեք անգամ ավելի հաճախ էին հարբեցողությամբ զբաղվում եւ, համապատասխանաբար, 3,6 անգամ ավելի հաճախ էին վաստակում ալկոհոլի հետ կապված լուրջ հիվանդություններ, օրինակ՝ լյարդի ցիռոզ:

Սակայն հաջորդ տասնամյակների ընթացքում այդ խզումն աստիճանաբար կրճատվում է, եւ 21-րդ դարի սկզբին տղամարդիկ միայն փոքր-ինչ (1,1 անգամ) են շատ խմում կանանցից, նրանցից միայն 1,2 անգամ ավելի հաճախ են իրենց հասցնում ալկոհոլիզմի եւ միայն 1,3 անգամ ավելի հաճախ են ալկոհոլի հետ կապված առողջական խնդիրներ ունենում:



Արծիվը նստել էր ծառին ու ոչինչ չէր անում, ինչպես դու, ու ոչինչ հանգստանում էր: Փոք-

ԱՐԾԻՎՆ ՈՒ ՃԱԳԱՐԸ

րիկ ճագարը տեսավ արծիվն ու հարցրեց. - Կարո՞ղ եմ ես էլ այդպես նստել, ինչպես դու, ու ոչինչ հանգստանում եմ: Փոք-

ԱՌԱՎ

Հանկարծ հայտնվեց աղվեսը, բռնեց ճագարին ու կերավ: Եզրակացություն. նստելու եւ ոչինչ չանելու համար, դուք պետք է շատ-շատ բարձր տեղում նստեք:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Փնտրիր բարին ամենուրեք, ու երբ գտնես, դուրս բեր թաքստոցից, եւ թող նա լինի ազատ ու աներկյուղ: ԿԻԼՅԱՍ ՍԱՐԴՅԱՆ Ամերիկահայ գրող Արեւի մոտ աստղերն են ողջ կորցնում իրենց փայլը գունատ: ՇՈՐԱ ՌՈՒՄՈՎԿԵԼԻ (1172-1216) Կրաց բանաստեղծ Ո՛չ բանակի հզորությունը, ո՛չ զենքի որակը, այլ ոգու ուժն է ապահովում հաղթանակը: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈՒՎՈՐՈՎ

(1730-1800) Ռուսական բանակի գեներալիսիմոս Հարկերից խուսափումը միակ ինքնաձայնաձայնակող ինտելեկտուալ զբաղմունքն է.. ԷԴԻՍՈՆ (1847-1931) Ամերիկացի գիտնական Երկարատեւ չէ այն իշխանությունը, որն ի վնաս ժողովրդի է կառավարում: ՄԵՆԵԿՎ (Մ.թ.ա. 4-մ.թ.65) Հռոմեացի փիլիսոփա

Միապետության ժամանակ արդարադատությունը բխում է թագավորից: Հանրապետության ժամանակ այն պետք է բխի ժողովրդից: ԿԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ (1802-1885) Ֆրանսիացի գրող Երբեք, հինգ րոպեով անգամ չհաղորդակցվեք վանող արտաքինով կին-մարդկաների հետ: Հիշե՛ք, նրանց մեջ շատ են վիուկները: Ա.ԱՐԲՈՒՅԱՅԱՆ «Վրաստանի» ընթերցող

2 Ս՞ Ի . ձ 1 Ս՞ Ծ

© Աշոտիկը Վարդանիկին հարցնում է. - Երեկ ինչի՞ դասի չէիր եկել: - Ատամն ցավում էր: - Հիմա ցավո՞ւմ է... - Չգիտեմ՝ ատամնաբույժի մոտ է: © Սելզ գնում է բժշկի մոտ և ասում. - Բժիշկ ջան, ինչի՞ց քաղցր եմ ասում, ինձ թվում է, թե մարդիկ լուրջ չեն ընդունում: Բժիշկը.

- Ես կատա՛ն ես անում, նա՛յ ախպեր: © Հիվանդը՝ բժշկին. - Բժիշկ, չեմ կարողանում քնել, ինչ անեմ: - Մինչեւ 3-ը հաշվի: - Այդքան քի՞չ, գարնացած հարցնում է հիվանդը: - Դե, եթե մինչեւ ամենաշատը 4 անց 15 հաշվելը չօգնի, այն ժամանակ դեղ կգրեմ, պատասխանում է բժիշկը: © - Բժիշկ, ես ձեզ որերո՞րդ անգամ եմ բացատրում, որ իրոք հիվանդ եմ: - Իսկ ես ձեզ ասում եմ, որ դուք դա ներշնչել եք: Դուք առողջ եք: - Բայց ես ինձ վատ եմ զգում: - Դա ձեր կասկածա-տության հետեւանքն է:

Ինքներդ ձեզ կրկնեք. «Ես առողջ եմ, ես առողջ եմ», եւ ձեզ շատ լավ կզգաք: - Լավ, շնորհակալություն: Ես գնացի: - Սպասեք, բա չե՞ք վճարելու: - Դա ձեր կասկածա-տության հետեւանքն է, բժիշկ: Ինքներդ ձեզ կրկնեք. «Ինձ վճարել են, ինձ վճարել են», եւ բարձր տրամադրություն կունենաք:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՎԱՎԵՐԱՅՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՅԻՆՈՒՄ

Նոյեմբերի 17-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով ԵՄ հանձնակատար Յոհաննես Չանին:



Չանիյանը նշվեց, որ որակական առաջընթաց է արձանագրվել Հայաստան-ԵՄ համագործակցության մեջ՝ ավելի է ակտիվացել բարձրաստիճան քաղաքական երկխոսությունը, արձանագրվել են որոշակի ձեռքբերումներ:

Հայաստանի նախագահը հույս հայտնեց, որ թե՛ արտաքին գործերի, թե՛ կրթության, գիտության ու հետազոտությունների հարցերով նախարարական քննարկումների արդյունքները, 2017թ. Բյուրեւում կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովին ընդառաջ, իրենց որակյալ ներդրումը կունենան ԵՄ եւ գործընկեր երկրների միջեւ համագործակցության ամրապնդման գործում:

Չանիյանը նախագահ Սերժ Սարգսյանը եւ հանձնակատար Յոհաննես Չանը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային խնդիրների ու մարտահրավերների, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ԵՐԿՐՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



Նոյեմբերի 16-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով փոխտեղակալ Բրիջիթ Բրինքի հետ:

Քաղաքական երկխոսությունը ոչ միայն կշարունակվի նախագահ Թրամփի վարչակազմի օրոք, այլև նոր շունչ կստանա:

ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով փոխտեղակալը վստահեցրեց, որ Միացյալ Նահանգների նոր վարչակազմը շարունակելու է հետաքրքրված լինել Հարավային Կովկասի տարածաշրջանի զարգացումներով, շարունակելու է նաեւ հանձնառու լինել ԼՂ հիմնախնդրի կարգավորման նպատակով վստահության

միջոցների ամրապնդման ուղղությամբ ձեռքբերված վերջին պայմանավորվածությունների իրագործմանը:

Չանիյանը գրուցակիցները մտքեր փոխանակեցին հայ-ամերիկյան հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունների շուրջ: Դյուրի խնդրանքով, Հայաստանի նախագահը ներկայացրեց է քաղաքական եւ տնտեսական օրակարգի առաջնահերթությունները, ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացում հայկական կողմի նույնպես ընդունելի:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՈՒՐՍՏԱՆ. ԿՍՏԵՂՎՈՐ ՄԻԱՅՅԱԼ ՁՈՐԱՄՈՒՄԸ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կարգադրություն է ստորագրել, որով հավանություն է տրվել Հայաստանի եւ Ռուսաստանի միացյալ խմբավորման մասին համաձայնագրին, համապատասխան փաստաթուղթը նոյեմբերի 14-ին հրապարակված է իրավական տեղեկատվության պաշտոնական ինֆորմացիոն-պորտալում: «Ընդունել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի Միացյալ զորային (ուժերի) վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի միջեւ համաձայնագրի ստորագրման մասին Ռուսաստանի Դաշնության կառավարության առաջարկը».- ասված է փաստաթղթում: Կարգադրության տեքստի համաձայն՝ ՌԴ պաշտպանության նախարարությանը հանձնարարված է ՌԴ ԱԳ նախարարության մասնակցությամբ բանակցություններ վարել հայկական կողմի հետ եւ համաձայնության հասնելուց հետո Ռուսաստանի անունից ստորագրել նշված համաձայնագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ. ԿՍՏՈՒՆ ԵՎ ՎՍԱԶԵՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում մեկնարկեց «ՆԱՏՕ-ի շաբաթ» 10-րդ միջոցառումների շարքը: Բայանն արարողությանը տեսակարար կիր ուղղույնի խոսքը հայտնեց Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապարտուրալը՝ ընդգծելով Հայաստանում միջոցառման անցկացման կարեւորությունը: «Հ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության վարչության պետ Գազիկ Հովհաննիսյանն էլ ներկայացրեց նոյեմբերի 14-18-ն անցկացվող միջոցառումների շարքը՝ նշելով, որ հիմնական նպատակն է հանրությանը ներկայացնել այն գործողությունները, որոնք Հայաստանը զարգացնում են ՆԱՏՕ դաշինքի հետ համագործակցության շրջանակում: Միջոցառումների շարքը կեդրամակվի Երեւանի պետական համալսարանի ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմամբ:

ՈՒՐՍՏԱՆԻ ԵՎ American Express ՆԱՏՕ-Ի ԱՎԲԱՎԵՐԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ Բանկը նոյեմբերի 16-ին հայտարարեց Հայաստանում American Express նոր կայքի գործարկման մասին (www.americanexpress.am): ԱՎԲԱՎԵՐԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ Բանկը հանդիսանում է Հայաստանում American Express ընկերության բացառիկ գործընկերը, եւ նոր կայքը մշակվել է ընկերությունների համապետել ուժերով: Կայքը կառուցված է American Express-ի կողմից ներկայումս մի շարք եվրոպական երկրներում արդեն կիրառվող առաջադեմ պլատֆորմի վրա եւ փոխարինում է նախորդ կայքին, որը հասանելի էր միեւնույն հասցեով: Նոր կայքն ավելի արդիական է շնորհիվ Հայաստանում թողարկվող American Express քարտերի առավելությունների եւ հնարավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առավել պարզ ներկայացման:

Հայաստանում մեկնարկեց «ՆԱՏՕ-ի շաբաթ» 10-րդ միջոցառումների շարքը: Բայանն արարողությանը տեսակարար կիր ուղղույնի խոսքը հայտնեց Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապարտուրալը՝ ընդգծելով Հայաստանում միջոցառման անցկացման կարեւորությունը: «Հ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության վարչության պետ Գազիկ Հովհաննիսյանն էլ ներկայացրեց նոյեմբերի 14-18-ն անցկացվող միջոցառումների շարքը՝ նշելով, որ հիմնական նպատակն է հանրությանը ներկայացնել այն գործողությունները, որոնք Հայաստանը զարգացնում են ՆԱՏՕ դաշինքի հետ համագործակցության շրջանակում: Միջոցառումների շարքը կեդրամակվի Երեւանի պետական համալսարանի ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՏՕ-Ի ԱՎԲԱՎԵՐԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ Բանկը նոյեմբերի 16-ին հայտարարեց Հայաստանում American Express նոր կայքի գործարկման մասին (www.americanexpress.am): ԱՎԲԱՎԵՐԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ Բանկը հանդիսանում է Հայաստանում American Express ընկերության բացառիկ գործընկերը, եւ նոր կայքը մշակվել է ընկերությունների համապետել ուժերով: Կայքը կառուցված է American Express-ի կողմից ներկայումս մի շարք եվրոպական երկրներում արդեն կիրառվող առաջադեմ պլատֆորմի վրա եւ փոխարինում է նախորդ կայքին, որը հասանելի էր միեւնույն հասցեով: Նոր կայքն ավելի արդիական է շնորհիվ Հայաստանում թողարկվող American Express քարտերի առավելությունների եւ հնարավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առավել պարզ ներկայացման:

Հայաստանում մեկնարկեց «ՆԱՏՕ-ի շաբաթ» 10-րդ միջոցառումների շարքը: Բայանն արարողությանը տեսակարար կիր ուղղույնի խոսքը հայտնեց Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապարտուրալը՝ ընդգծելով Հայաստանում միջոցառման անցկացման կարեւորությունը: «Հ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության վարչության պետ Գազիկ Հովհաննիսյանն էլ ներկայացրեց նոյեմբերի 14-18-ն անցկացվող միջոցառումների շարքը՝ նշելով, որ հիմնական նպատակն է հանրությանը ներկայացնել այն գործողությունները, որոնք Հայաստանը զարգացնում են ՆԱՏՕ դաշինքի հետ համագործակցության շրջանակում: Միջոցառումների շարքը կեդրամակվի Երեւանի պետական համալսարանի ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմամբ:

Հայաստանում մեկնարկեց «ՆԱՏՕ-ի շաբաթ» 10-րդ միջոցառումների շարքը: Բայանն արարողությանը տեսակարար կիր ուղղույնի խոսքը հայտնեց Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապարտուրալը՝ ընդգծելով Հայաստանում միջոցառման անցկացման կարեւորությունը: «Հ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության վարչության պետ Գազիկ Հովհաննիսյանն էլ ներկայացրեց նոյեմբերի 14-18-ն անցկացվող միջոցառումների շարքը՝ նշելով, որ հիմնական նպատակն է հանրությանը ներկայացնել այն գործողությունները, որոնք Հայաստանը զարգացնում են ՆԱՏՕ դաշինքի հետ համագործակցության շրջանակում: Միջոցառումների շարքը կեդրամակվի Երեւանի պետական համալսարանի ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Նոյեմբերի 16-ին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը Մոսկվայում մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին:

Եվրասիական միջկառավարական խորհուրդը քննարկեց, ապա հավանություն տվեց Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքի մասին նախագծին: Նախագծի քննարկման ժամանակ ընդգծվեց, որ, ի թիվս տնտեսական զարգացման եւ միասնական տնտեսական տիրույթի հետագա առաջընթացը կարգավորող այլ հարցերի, մասնավորապես, հաշվի են առնվել անդամ երկրների բիզնեսի շահերը:

Միջկառավարական խորհրդի նիստում հավանության են արժանացել նաեւ միասնական շուկայում դեղերի շրջանառությունը կարգավորող իրավական նորմերը, որոնց համաձայն, 2017 թվականի

հունվարի 1-ից Եվրասիական տնտեսական միության տարածքում կգործի դեղերի միասնական շուկա: Միաժամանակ ընդգծվեց, որ առհասարակ այս երկու նախագծերի ընդունումն էական քայլ է միասնական շուկայի կայացման ուղղությամբ:



Եվրասիական միջկառավարական խորհուրդը որոշում ընդունեց խորհրդի հաջորդ նիստն անցկացնել 2017 թվականի առաջին եռամսյակում Բիշքեկում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՆԱՏՕ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵ Է, ԹԵ ՈՒՄ ՀԵՏ ՊԵՏԵՔ Է ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՅԻ»

Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի ղեկավար, դեսպան Ուիլյամ Լաիյուն չի ցանկանում ենթադրություններ անել Հայաստանի մտադրությունների մասին՝ կապված հոկտեմբերին Երեւանում ընդունված ՀԱՊԿ երկրների ռազմավարությանը Հայաստանի մասնակցության վերաբերյալ: «Ես չեմ կարող ասել, թե Հայաստանն ինչ է ցանկանում անել»,- ասաց նա:

Հունեն Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ եղած ամուր գործընկերության վերաբերյալ: «Ուիլյամ Լաիյուն նշեց նաեւ, որ Հայաստանի գործն է որոշել, թե ում հետ պետք է իր հարաբերությունները կառուցի. «Դա անհատական է յուրաքանչյուր ազգի համար: ՆԱՏՕ-ի ուժեղ արժեքներից է, որ յուրաքանչյուր սուվերեն երկիր իրավունք ունի իր սեփական որոշումն ընդունելու, թե ինչպես կառուցի իր հարաբերությունները»:

Tert.am-ի դիտարկմանը, թե Հայաստանում փորձագիտական շրջանակներ այն համարում են պատասխան վարչավայում ընդունված ՆԱՏՕ-ի կոմյունիկեին, նա պատասխանեց. «Ես կարող եմ ասել, որ Հայաստանն ամուր

գործընկերային հարաբերություններ է ստեղծել ՆԱՏՕ-ի հետ, եւ այդ գործընկերությունը շարունակվում է: Մենք ուրբաթ օրը քննարկեցինք ՆԱՏՕ-ի Անհատական գործողությունների ծրագիրը, եւ ես ոչ մի անհանգստություն



Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներով, Շվեյցարիան առաջին տեղում

տարվա մույն ժամանակահատվածի նկատմամբ, սակայն, այս տարի 16,2 տոկոսով նվազել է Շվեյցարիայից

ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐԺԵՔՈՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՑԱՐԵՐԵԼ Է ՇՎԵՅՏԱՐԻԱՆ

Այս տարվա հունվար-սեպտեմբերին Հայաստան մարդասիրական օգնության կարգով Շվեյցարիայից ներմուծվել է 7 մլն 708.1 հազար ԱՄՆ դոլարի ապրանք:

Հայաստան ստացվող մարդասիրական օգնությունը: ԱՄՆ-ից Հայաստան է ուղարկվել 6 մլն 729.9 հազար դոլարի մարդասիրական օգնություն: Նախորդ տարվա համեմատ ծավալն աճել է 14.6 տոկոսով: 2016 թվականի հունվար-

սեպտեմբերին Չինաստանից Հայաստան է առաքվել 3 մլն 939.5 հազար ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնություն՝ աճելով 12.4 տոկոսով: 2 մլն 236.4 հազար ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնություն է ուղարկվել Իտալիայից՝ աճելով 75.2 տոկոսով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

19.11.2016. Տոն բոլոր սրբերի՝ հնրերի և նորերի, հայտնիների և անհայտների

ՆՈՅԵՄԲԵՐ



Աստվածահայտնության տոնին: Հիսնակա Բարեկենդանը 7 օրերի շարժականությամբ նշվում է նոյեմբերի 15-ից մինչև 21-ը, այս տարի՝ նոյեմբերի 15-ին:

21.11.2016. Տոն էրեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարի ընծայման

Սուրբ Կույս Մարիամին նվիրված տոներից է Երեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարին ընծայման տոնը, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոգեկոչում են նոյեմբերի 21-ին:

Հայ եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

20.11.2016. Բարեկենդան Հիսնակաց Պահոց

Հիսնակը հիսնօրյա Պահքի շրջան է, որը նախորդում է

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ Է ՎՐԱՍՏԱՆ ԱՅՅՆԼՈՒՆԵՐԻ ԹՎՈՎ

2016 թվականի հոկտեմբերին, ընդհանուր առմամբ, Վրաստան են ժամանել 527 հազար 157 օտարերկրացիներ, ինչը, երկրի ՆԳ նախարարության տեղեկատվության համաձայն, 4,5 տոկոսով բարձր է անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշից:

Վրաստան այցելուների թվով Հայաստանը պահպանում է առաջատարի դիրքը: Այստեղից՝ հոկտեմբերին Վրաստան է ժամանել 125 հազար 665 այցելու, ինչը 2,1 տոկոսով ցածր է անցյալ տարվա հոկտեմբերի ցուցանիշից: Ադրբեջանից այցելուների թիվը կազմել է 119 հազար 967, Թուրքիայից՝ 101 հազար 621, Ռուսաստանից՝ 88 հազար 192:

Անցյալ տարվա հոկտեմբերի ցուցանիշից: Ադրբեջանից այցելուների թիվը կազմել է 119 հազար 967, Թուրքիայից՝ 101 հազար 621, Ռուսաստանից՝ 88 հազար 192:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ԼԱՐՍԻ ԱՆՃԱԿԵՏԸ ԲԱՅ Է ՄԻԱՅՆ ՄԱՐԴԱՏԱՐ ԱԿՏՈՍԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտից տեղեկացնում են, որ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը նոյեմբերի 18-ի դրությամբ, անվաշղթաների կիրառման դեպքում բաց է միայն մարդատար ավտոմեքենաների համար:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՐՏԱՆԸ»

ՆՈՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԵՉ, «ԱՌՎՈՏ ԼՈՒՍՈ»

Նիոնծմինդայի «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային կենտրոնի «Առավոտ լուսո» երգչախումբը «Հայարտանը» ներկայացավ համերգով:



ծուրյուններից:

- «Առավոտ լուսո» եւ «Պառնասը» ընդամենը 3 տարվա պատմություն ունեն, իրենց առաքելությունը համարում են ազգային հոգեւոր մշակույթի պահպանումն ու փոխանցումը.- այս մասին իր խոսքում ասաց նրա ղեկավար, Նիոնծմինդայի մուսիկալիստետի վարչության մշակույթի ծառայության պետ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Անիսյանը:



Թբիլիսիում, Սուրբ Գեորգ եկեղեցու վերակառուցման հիմնադրամի, Վրաստանի «Թանաղդոմ» կրթական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ եւ «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աջակցությամբ:

Նիոնծմինդայի «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային կենտրոնի «Առավոտ լուսո» երգչախումբը, որն արժանացավ ներկայից երեք ընդունելությանը, վարում էր երիտասարդ խմբավար Իրինա Ղարսյանը:

«ԵՍ ՆԿԱՐՈՒՄ ԵՄ ԹԲԻԼԻՍԻՆ»

րոնի աջակցությամբ, Առաջնորդամիստ եկեղեցու բակում տեղի ունեցած «Երեխաների պաշտպանության միջազգային օրվան» նվիրված «Ես նկարում եմ հին քաղաքը» խորագիրը կրող մրցույթին մասնակցած Վրաստանի մանուկ նկարիչներին վրացում, հային, ռուսին, արխազին, օսին, ադրբեջանցում, եգիպտացում:

ՖՈՒՏԲՈՒԼ

ՀՈՒՍԱԴՐՈՂ ԽԱՂ՝ ՇՈՇԱՓԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ

Նոյեմբերի 11-12-ին Վրաստանի եւ Հայաստանի ազգային հավաքականները աշխարհի առաջնության ընտրական փուլի շրջանակներում անցկացրին հերթական հանդիպումներ:

Վրաստանի թիմը հյուրընկալել էր Մոլդովայի հավաքականին: Չնայած տանտերերի առավելության, հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1: Հայաստանի հավաքականը սեփական հար-

կի տակ ընդունեց Չեռնոգորիայի թիմին եւ պարտության մատնեց 3:2 հաշվով: Ներկա դրությամբ D խմբում հանդես եկող Վրաստանը, չորս խաղից հետո 2 միավորով զբա-

ղեցնում է խմբի արյուսակի նախավերջին հորիզոն: Այս պահին Վրաստանի հավաքականը 3 միավորով է մնում հետոստից: Նոյեմբերի 1-ին, «Հայարտուն» մշակույթի կենտրոնում, տեղի ունեցավ այդ մրցույթի մասնակիցների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Ես նկարում եմ հին քաղաքը» խորագիրը կրող մրցույթին մասնակցած Վրաստանի մանուկ նկարիչներին վրացում, հային, ռուսին, արխազին, օսին, ադրբեջանցում, եգիպտացում:



6x6 grid with numbers 1-60 in a specific pattern.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 7.Արդյունաբերական ձեռնարկություն: 8.Թբիլիսիի շրջաններից: 9.Ոխ, վրեժ: 10.Սետաղագործ: 13.Երաժշտական գործիք: 19.Վրացական «Մագթի» բջջային օպերատորի կանխավճարային քարտ: 20.Ուտելիքին համ տվող: 23.Հայաստանի բնիկ մրգերից: 24.Թանկարժեք քար: 29.Հաստ թել: 31.Լեհաստանի դրամական միավորը: 34.«Լացող» ծառ: 35.Հին հունական դիցարանում ռազմի աստվածը: 36.Երիզ (խակց.): 39.Արքայի բազմոց: 41.Արու արծիվ: 43.Հատապտուղ: 46.«... հասավ գառանը»: 48.Բնության երեւոյթ: 49.Բերդաքաղաք Լեռնային կամ Քարուտ Կիլիկիայում: 51.Ջրոլող թռչուն: 52.Հայեցակետ, կարծիք: 54.Բրիտանացի դերասան ... Բարոն Կոնե: 56.Լղար, վտիտ: 57.Վրացական բջջային կապ: 58.Փաղաքական մասնիկ: 59.Գլխարկի տեսակ: 60.Վրաց մարզիկ, խՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ ... Կարտոզիա: ՈՂՂԱՄԱՅՆ. 1.Ամոթ, պատվազգացում: 2.Չկան փուռ: 3.Երկիր ներմուծվող ապրանքների համար վճարվող տուրք: 4.Վտիտ, պայծառ: 5.Այս, ասիկա: 6.Երաժշտության ոճ: 11.Ասացվածք, առակ: 12.Հայ մանկագիր Խնկո ...: 14.Հարցական դերանուն: 15.Հայկական այբուբենի տառ: 16.Այն (արեւմտ.): 17.Նիրի, նինջ: 18.Մեծաբան փոփոխական: 21.Լադի 24 տոնայնություններից մեկը: 22.Գարնան ամիս: 25.Այծի «բալիկ»: 26.Արաբական այբուբենի 16-րդ տառը: 27.Հայ բենի մեծանուն դերասանուհի ... Ասրյան: 28.Հիսուս Քրիստոսի առաքյալներից: 30.Հնագույն հեռահար զենք: 32.Չեխ նկարիչ եւ գրող Յոզեֆ ...: 33.Բարձր ջերմությամբ եւ դողով արտահայտվող հիվանդություն: 37.ՀՀ ազգային հերոս, ճարտարագետ ... Մանուկյան: 38.Թռչունների խումբ: 39.Չոր, ցամաք: 40.Արու ձի: 42.Հայ պետական եւ ռազմական գործիչ, քաղաքագետ-ինաստասեր Գարեգին ...: 44.Բելգիական-իտալական ծագումով երգչուհի ... Ֆաբիան: 45.Հանգստյան օր: 46.Ավան Վրաստանում: 47.Եթովպիայի մայրաքաղաքը՝ Ադիս-...: 50.Նահանգ Մեծ Հայքում: 53.Օրգանական հանքանյութերի դասին պատկանող խեժային հանածո: 54.Չկան տեսակ: 55.Բարակ ու դալար ճյուղ, ոստ: Կազմեց ԷԼԼՍ ԱՌԱՐԵԿՅԱՆԸ

ՆԱՆՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Կեսուր: 5.Աշնակ: 9.Սամբա: 10.Ավանակ: 12.Ուրբաթ: 15.Նիոն: 16.Լայնա: 19.Մի: 20.Համր: 22.Ոսկեղար: 24.Իր: 25.Վրա: 27.Նիզբերիա: 30.Տրե: 31.Նան: 32.Լուր: 34.Վանուշ: 35.Վայ: 36.Ան: 37.Այգի: 38.Կորեկ: 41.Լոնդա: 42.Ֆան: 43.Ար: 44.Հուռի: 46.Ալ: 47.Աջ: 49.Սիսակ: 53.Տավար: 55.Ակտ: 57.Սա: 58.Արեգ: 59.Եզան: 60.Ինադու: 61.Կմ: ՈՂՂԱՄԱՅՆ. 2.Ելակ: 3.Օհան: 4.Սար: 5.Արո: 6.Շարա: 7.Արան: 8.Սանահին: 11.Կինոֆիլմ: 13.Բյուր: 14.Թամար: 17.Արվեն: 18.Սերտ: 21.Արինա: 23.Արեւիկ: 25.Վեներա: 26.Արշակ: 28.Գայանե: 29.Աու: 33.Րաֆֆի: 35.Վալյա: 36.Անահիտ: 39.Ոսկի: 40.Երմակ: 45.Ռեւազ: 46.Աստղիկ: 48.Ֆրանս: 50.Սատար: 51.Կտրուկ: 52.Արել: 54.Ասեն: 56.Լատ:

Advertisement for VRASTAN with contact information: Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net